

# ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅԻ

տորին Գրիգորի Ներսիսեան ողբերգաբար  
սգեալ է թաղուհն Տիեզերալոյս Վարդապետին  
իւրոյ Յօւսէանու Որոտսեանոյ



**Մ ԻՋԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅ ՎԱՐՈՒՊԵՏՆԵՐ**

**Գ ՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅԻ**

**ՆԵՐՔՈՂՅԱՆ ՀՈՎՀԱՆ ՈՐՈՏԱԵՅՈՒՆ**

**ԵՐԵՎԱՆ  
ՏԻԳՐԱՆ ՄԵԾ  
2007**

**Գ ՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅԻ**

**Ն**որին Գրիգորի Ներբողեան ողբեր-  
գարար սգեալ ի թաղոմա Տեշերալոյս  
Վարդապետսն իւրոյ Յօւսսսոյ Որոսսեջոյ



ՀՏԴ 891.981-1 Գրիգոր Տաթևացի  
ԳՄԴ 84 Հ1-5  
Գ 885

Աշխատասիրությամբ՝ Ս. Մ. Գրիգորյանի

### Գրիգոր Տաթևացի

Գ 885 Ներբողյան Հովման Որոտնեցուն/Գրիգոր Տաթևացի,  
Աշխատությանմբ Ս. Մ. Գրիգորյանի,- Եր.:  
Տիգրան Մեծ, 2007.- 32 էջ:

Ընթերցողին է ներկայացվում Գրիգոր Տաթևացու  
Ներբողյանը, որը հեղինակի միակ գեղարվեստական  
ստեղծագործությունն է: Այն ձևովել է Հովման Որոտնե-  
ցուն՝ միջնադարյան մեծ վարդապետին և Տաթևացու ու-  
սուցչին և գրվել վերջինիս հուղարկավորության օրերին:

Գ 4702080102  
774 (01) 2007 2007 թ.

ԳՄԴ 84 Հ1-5

ISBN 978-99941-0-184-9

© Ս. Մ. Գրիգորյան, 2007թ.

Վասն որոյ չասաց Քրիստոս առակ թէ՝ (գոր  
ինչ խնդրէք, առնոյք. այլ թէ՝ գոր ինչ խնդրէք  
հաւատով յաղոթս՝ առնուցուք), իսկ անհաւատն և  
յուսահատն ոչ առնու: Պիտոյ է հարազատ սէր  
առ աստուած՝ զի լիցիս բարեկամ և սիրելի  
աստծոյ ի հաճոյս նորա, յայնժամ լսէ խնդիրն:

Գրիգոր Տաթևացի  
Գիրք քարոզութեան, Չմերան հատոր

### Առաջաբան

Գրիգոր Տաթևացին միջնադարյան հեղինակների շարքում ու-  
սումնասիրվել է նախ և առաջ իբրև աստվածաբան և փիլիսոփա:  
Խորհրդային տարիներին գրվել է նաև նրա սոցիալ-տնտեսագիտա-  
կան հայացքների մասին: Մակայն այսքանով բնութագրել այդ հեղի-  
նակին, նշանակում է նրան ներկայացնել խիստ թերի: Տաթևացու մե-  
ծածավալ գրական ժառանգության, ինչպես նաև ձեռագիր աշխա-  
տությունների ուսումնասիրությամբ հնարավոր եղավ նրա մասին խո-  
սել նաև իբրև ինքնուրույն քերականի, մանկավարժի և նշանավոր  
գործչի<sup>1</sup>: Նրա գրական ժառանգությունը թույլ տվեց հրատարակել  
նաև նրա թևավոր խոսքերն<sup>2</sup> ու առակները<sup>3</sup>: Եվ ահա ընթերցողին ենք  
ներկայացնում նրա Ներբողյանը, որը հեղինակի միակ գեղարվես-  
տական ստեղծագործությունն է: Այն ձևովել է Հովման Որոտնեցուն՝  
միջնադարյան մեծ վարդապետին և Տաթևացու ուսուցչին և գրվել  
վերջինիս հուղարկավորության օրերին: Եվ քանի որ մի շարք ուսում-

1 Ս. Գրիգորյան, Պատմական քերականության հարցեր. Գրիգոր Տաթևացի,  
Երևան, 2002թ.:

2 Գրիգոր Տաթևացի, Թևավոր խոսքեր և ասույթներ, Երևան, 2003թ.:

3 Ս. Գրիգորյան, Միջնադարյան առակներ և զրույցներ, Երևան, 2006թ.:



նասիրողներ Որոտնեցու մահվան տարեթիվը նշում են 1386 (այլք՝ 1388) թվականը, ուստի սա մաս Ներբողյանը գրելու տարեթիվն է։ Ներբողյանը հրատարակվել է Տաթևացու «Գիրք քարոզութեան» Ամարան հատորի հետ, Կ.Պոլսում՝ 1741թվականին։

Հայագիտության մեջ այս փոքրիկ գործն արժանացել է միայն Մանուկ Աբեղյանի ուշադրությանը, և սրա մասին երբևիցե ասված ամենաբնութագրական խոսքը ևս պատկանում է նրան. «**Հովհաննես Որոտնեցու քաղման ժամանակ ասած նրա ներբողյանն իսկապես հարուստ է ճարտասանական ձևերով - հարցում, բացազանություն, կրկնություն մման կազմությամբ խոսքերի և այլն. կան մաս պատկերավոր և առատաբան արտահայտություններ առանց ճոռոմության, տրտմագին զգացմունքով և անկեղծ սիրով լի մի գեղեցիկ ներբողյան, Սուրբ Գրքից առած մմանություններով մի երախտագիտական գովեստ արժանավոր գործչի**», - գրում է նշանավոր հայագետը<sup>4</sup>։ Եվ իսկապես, սա էպիկական հզոր շնչով գրված ողբ է սիրելի մարդու կորստյան համար։ Յույց տալու համար այդ ցավը Տաթևացին ամբողջ Ներբողյանը շարադրել է հակադրությամբ կառուցելու ճանապարհով։ Ներբողյանը հարուստ է ճարտասանական հնարքներով, ինչը ենթադրել է տալիս, որ այն հասցեագրվել է կենդանի ունկնդրին. այս հանգամանքը, ինչպես տեսանք, նկատել է մաս Մանուկ Աբեղյանը։

Ներբողյանի գեղարվեստական արժանիքներից է ոճական հնարանքների բազմափոփոխ կիրառությունը. անսպասելի պատկերավոր համեմատությունները, տասնյակից անցնող հեղինակային նորակազմությունները, օքսիմորոնները ներբողյանի լեզուն դարձրել են հարուստ, ճոխ և ինքնատիպ։ Սրան նպաստել է մաս հակամիջ բառերի առատ կիրառությունը, որ գեղարվեստական, մասամբ մաս՝

հրապարակախոսական, հռետորական խոսքի հատկանիշներից է, մի բան, որ երկկողմանիորեն հատուկ է Տաթևացու Ներբողյանին։

Այս փոքրիկ գործում նկատված նոր բառերի թիվն անցնում է մեկ տասնյակից։ Միայն դրանց թվարկումը բավական է՝ տեսնելու հեղինակի լեզվաշինական անգուգական հմտությունները։ Համեմատության համար ասենք, որ Հրաչյա Աճառյանը Տաթևացու մեկ այլ գործում՝ «Պարապմանց գրքի» մեկնությունում, գտել է հեղինակի չորս տասնյակ նոր բառերը։ Մեր կողմից Տաթևացու գրական ժառանգության համակողմանի ուսումնասիրությամբ դուրս են բերվել գրեթե նույնքան նոր բառեր։ Ներբողյանում տեղ գտած նորակազմությունները հետաքրքիր են թե՛ բառակազմության, թե՛ գործող իմաստային դաշտում նոր նրբերանգներ նկատելու առումով.

**անխաղաղ -**

(«Ո՛վ անխաղաղ ալեացս», (Գիրք քարոզութեան, Ամարան էջ 715). Բառարանները վկայում են միայն **անխաղաղությամբ** ձևը, անսկանական կիրառությունը նորություն է.

**արժանակառոյց -**

(«Շարժեցաւ հիմն արժանակառոյց», նույնը, էջ 715)։ Չի վկայում գրաբարի ոչ մի նշանավոր բառարան<sup>5</sup>։ Եվ քանի որ բառը բացակայում է մաս 2006թ. հրատարակված «Գրաբարի հոմանիշների բառարանում»<sup>6</sup> նույնպես, նշանակում է բառը այդպես էլ մնացել է հայագետների ուսումնա-

<sup>4</sup> Մ. Աբեղյան, Երկեր, հատոր Դ, Երևան, 1970թ., էջ 416-417։

<sup>5</sup> Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հատոր 1,2, Երևան, 1979, 1981թ.թ.։

Առձեռն բառարան հայկազեան լեզուի, Վենետիկ, 1865թ.։

Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, հ. 1-4, Երևան, 1944-45թ.թ.։

6 Ռ. Ղազարեան, Գրաբարի հոմանիշների բառարան, Երևան, 2006։

- սիրությունից դուրս: Տեքստում ունի **ամուր, պնդակազմ** իմաստը.
- արտագունեալ** - («Որև գիա՞րդ այսօր տեսանեմք զգունագեղ ականաւոր ակն արտագունեալ»- նույնը, էջ 714): Ունի **գունաթափված, գունազրկված** իմաստը: Որևէ բառարան դարձյալ չի վկայում: Բառակազմության տրամաբանությունը հասկանալու համար ասենք, որ գրաբարում կա **«արտաբունիմ»** բառը՝ «արտաքս ելանել իբրեւ բոյս ի բնէ իւրմէ» իմաստով.
- բազմակործան** - («Լ սա հանգոյն մմին [Յորին] ի բազմակործան փորձանաց զերծեալ», նույնը, էջ 712:) Ունի **բազում ինչ ավերած, խիստ ավերված** իմաստը.
- գրկափար** - («Վասն որոյ ըղձալի է ինձ գրկափար համբուրել զփռչի այնր զարշապարաց», նույնը, էջ 715): Որևէ բառարան չի վկայում: Ունի **գրկախառնված, գրկով փարված** իմաստը.
- ժանտաժանին** - («Ձի տվաւ նորոգեցաւ դաւանութիւն որ յԵփեսոս և հերքեալ կարկեցաւ ժանտաժանին Նեստորիոս», նույնը, էջ 713): Որևէ բառարան չի վկայում: Առձեռն բառարանը և Ստ. Մալխասեանցը վկայում են **ժանտաժուտ** ձևը՝ «ժանտին ժանտը» (շատ ժանտ) իմաստով.

#### լուսանշոյլ -

#### լուստեր -

#### ծնրահանգոյց -

(«լուսանշոյլ ցոլմանց արփիատրչի մերոյն հսկողին», նույնը, էջ 711): Բառարաններից վկայում են Առձեռնը և սրան հետևելով՝ նաև Ստ. Մալխասեանցը՝ «լոյս ցատկեցնող, լուսափայլ» իմաստներով: Սակայն Առձեռնը, ինչպես հայտնի է, հղում չի կատարում հեղինակային առաջին բառագործածությանը, իսկ Մալխասեանցը բերում է **«հին բառ կամ նշանակութիւն»** բառանշանի տակ: Սկզբնաղբյուրը, ամենայն հավանականությամբ, Տաթևացու այս բառագործածությունն է.

(«զօրէն լուստեր միքից ի մմանոյն զնոյն ընդունիլ», նույնը, էջ 711): Վկայում է միայն Ստ. Մալխասեանցը՝ **«անյայտ նշանակութեամբ բառ»** նշանի տակ և բերում «զօրէն լուստեր միքից» միակ վկայությունը, որը բացարձակապես նույնանում է Տաթևացու վերոնշյալ գործածության հետ: Բառը մինչև հիմա բացատրված չէ, և մնում է միայն համաձայնել Ստ. Մալխասեանցի հետ, այսինքն՝ անհայտ նշանակությամբ բառ.

(«Ըղձալի է ինձ համբուրել զփռչի այնր ծնկաց, որովք ծնրահանգոյց չարչարանօք մաշէր»: նույնը, էջ 715): Որևէ բառարան չի վկայում: Ունի **ծնկի իջած, ծնրադրած, ծնկաչոք** իմաստները.



- կրթոտ** - («որովք զկրթոտ ծունկս հաստատէր», նույնը, էջ 715): Որևէ բառարան չի վկայում: Թերևս, ունի **կրթնած** իմաստը.
- հերձադաւան** - («և ոչ բնակէր ի սրտի ի տան նորա ամենայն ամբարտաւան կամ հերձադաւան», նույնը, էջ 712): Որևէ բառարան չի վկայում: Ունի **հերձվածողներին դավանող, հերձվածադավան** իմաստը.
- մարգարէաբուղիս** - («որ բոլորովին էր մարգարէաբուղիս հոգի», նույնը, էջ 712): Ունի **մարգարէական, մարգարէաշնորհ** իմաստը:
- վերնատարած** - («բազկաց... որովք վերնատարած մաղթանօք զաղօթսն մոփրէր», նույնը, էջ 716): Բառարանները չեն վկայում.
- ցայգացանկ** - («Ի սմանէ յոքնանկար նորագիծ տառք և երաժշտական եղանակք, ցայգացանկ հսկմունք և ոտնկաց վերժանութիւնք», նույնը, էջ 714): Բառարանները չեն վկայում: Ունի **մինչ այգավերջյան** իմաստը.
- քառադրոշմ** - («որովք քառադրոշմ նշանիւք զղեսն հալածէր», նույնը, էջ 716): Որևէ բառարան չի վկայում: Ունի **քառապատկեր, քառաձև** իմաստները:

Նոր բառերը սովորաբար կազմվում են կամ ածանցման, կամ բառաբարդման ճանապարհով (արմատական բառեր հազվադեպ են հանդիպում). Տաթևացու Ներբողյանում նորակազմ բառերը հիմնա-

կանում բարդ են: Այս պարագայում, ինչպես և սպասելի է, երկու բառիմաստի համադրությամբ կամ նոր իմաստ է ձևավորվում (**ցայգացանկ**- մի դեպքում ունենք ցայգ՝ մինչև այգ իմաստը, մյուս դեպքում՝ ցանկ՝ եզր, իմաստը. արդյունքում հեղինակի նորակազմությունը ձևավորել է **մինչև այգի վերջը** բառիմաստը). կամ իմաստային հոմանիշ է ստեղծվում (**քառադրոշմ**, որ նույնն է թե նախկին **քառակերպ** կամ **քառաձև**-ը) և կամ՝ իմաստի սաստկացում է կատարվում. **ժանտաժանին՝ շատ ժանտ**:

Ներբողյանը, ինչպես նշեցինք, հարուստ է նաև նրբաբանություններով (օքսիմորոն), որ երկու հականիշ բառերի անսպասելի, սակայն հմուտ գործածությամբ նոր իմաստ ստանալու ոճական հնարանք է. **խորագետ պարզամտութեամբ, բարձր խոնարհութեամբ, մեծ սպասաւորութեամբ, օրհնութիւն անիծողաց, սէր ատելեաց, խռովելոց խաղաղութիւն, բարբարոսաց մարտիրոսութիւն, պատկառումն յանդգնելոց, ժրութիւն ծուլից**:


Կորստյան ցավը ընդգծելու համար Տաթևացին օգտագործել է նաև հակադրությունները. **օղապարհին թռչուն՝ գերանբարձ արծուին ծերացեալ և յերկիր անկեալ. զակն աղբեր կենեղուտ ջրոյն ցամաքեալ. զգունագեղ ականատր ակն արտագունեալ. ռսկին սոփերային անպիտացեալ. մաքրափայլ արծաթ ժանկիւ տգեղեալ. մարգարիտն անգին բեկմամբ անարգեալ**:

Ներբողյանի գեղարվեստական արժեքը մեծապես շահում է այն բանից, որ օգտագործված հականիշ բառերը մեծամասամբ ոչ թե համագործածական, այլ անհատական բնույթի են, այսինքն՝ արդյունք են հեղինակի ինքնատիպ լեզվամտածողության, որի պատճառով երևութները բնորոշվում են ոչ թե սպասելի հատկանիշներով, այլ՝ նոր եզրերով կամ նոր նրբիմաստով: Սա ուշադրության արժանի է ոչ



միայն Ներքողյանն իբրև գեղարվեստական գործ բնորոշելու համար, այլև գրաբարյան լեզվամտածողության առումով: Եթե քննենք Տաթևացու բերած անհատական հականիշներից յուրաքանչյուրը, ապա անառարկելիորեն մեկ անգամ ևս կհամոզվենք գրաբարի արտատվոր հարուստ լեզու լինելու մեջ: Սա իր հերթին վկայում է, որ Տաթևացին հին հայերենի գաղտնիքներին հրաշալի տիրապետող հեղինակներից է:

Ամփոփելով խոսքը Տաթևացու Ներքողյանի մասին՝ վստահաբար կարելի է ասել, որ այս փոքրիկ գործը, անկասկած, մի նոր, ինքնատիպ երանգ է ավելացնում միջնադարյան գեղարվեստական գրականության ներկայնական:



Նորին Գրիգորի Ներքողեան  
ողբերգաբար սգեալ ի թա-  
ղումն Տիեզերալոյս Վարդա-  
պետին իւրոյ Յօհաննու  
Ռրոտնեցոյ  
(Գլխի ճշե)

**Ո**րոց ուղիղ զգուշու-  
թեամբ են ստացեալ  
կեանս յանձին՝ նոցին յաւետ  
յիշատակութեամբ հասանի  
մահ և վախճան ասէ նազեր-  
գօղն տեսող. և որոց ախորժելի  
է զնոցայն վիպասանութիւն  
ներքողել բանի՝ պէտս ունի  
վարժից կրթութեան իմաստից  
դեզերիլ, կամ՝ իսկութեան նո-  
ցին հետևիլ, զօրէն լուստեր  
նիւթից՝ ի նմանոյն զնոյն ըն-  
դունիլ: Իսկ իմոյս կրասերու-  
թեան անբաւական գոլով առ  
սոցա՝ միայն տհաս մտօք և  
տարտամ՝ լեզուաւ, և միայն  
տկար մարմնով և ներքևեալ  
ոգով թակարթապատ հաղբի  
անճաճանչ խաւարին, շիջեալ  
և մեռեալ իմանալի մարդոյն  
անդամօք բնաւին, զիս՞ող զոր-  
բանն արժանապէս. զոր կար-

ծեմ թէ, սակաւ ոք ՚ի յագունց  
կարասցէ արդարև կշռապէս:  
Բայց երկու ինչ յորդորեալ  
հրաւիրեաց ձեռնարկել յայս  
հանդէս: Նախ՝ վերամբարձ  
հարկի քումդ հրամանի ըստ  
փիլիսոփային ներգովութեանց,  
գոլով գեղեցկագունիցն արժա-  
նի: Եւ ապա տարփումն և փա-  
փագումն ըստ տկարութեանս  
արտայայտնեցէ զայս պատ-  
կեր առն վեհի. զի թէ պատմօղ  
բան ոչ հանդիպի՝ այնու առա-  
ւել լիցի սքանչելի: Բայց այժմ  
ո՛վ կաճառք սրովբեագունդք և  
հոյք հրեշտակերամ ժողովոց.  
օ՛ն անդր վերտառացեալ մտօք  
և մաքրեալ լսելեօք՝ ի սկզբան  
բանիս առ բանն անսկիզբն.  
ուստի ամենայն լրութիւն ոչ ինչ  
յերկինս ի վեր և յերկիր խո-  
նարի՝ նախ քան զլինիլ էից և  
յառաջ գոյութեան գոյից՝ նա-  
խանկար տեսութեամբ և յա-  
ռաջ ընտրութեամբ որքանիւ  
ըստ ամանակին և որպիսու-  
թեանց՝ նորին կայանին զհան-  
դերձեալն նեկայօրէն սահմա-  
նեալ: Որև հրաւիրեալ և կոչեալ

ըստ ունեմն խորհրդոց հազա-  
րապետի խորոց անճառի՝ և  
արդարացուցեալ, և փառաւորս  
արարեալ: Եւ եթէ է՛ այս. որպէս և  
է՛ իսկ. զոմն առ ընդհանրի և  
զմասն բոլորի զուգահաւասար  
համագումարեալ. յորոց լմանէ  
համաքատակ գերամբարձու-  
թեամբ ՚ի վերջին ժամուս և յանկ-  
ման դարուս, յորում նուագեցան  
սուրբքն և ճշմարտութիւնք մարդ-  
կան՝ մինս այս միայն պահեալ և  
պատահեալ, երևեալ և պայծա-  
ռափայլեալ ՚ի տանս արևե-  
լեան ցեղից հայկազեան, լուս-  
աշոյլ ցոլմանց արփիաւորչի  
մերոյն հսկողին:


Եւ արդ ուստի՞ սկսեսցուք՝  
և յորո՞ց ներքողեսցուք զանձն  
բարերջանկութեամբ առ  
լցեալ. և բազմադիմի շնորհիւ  
շքեղացեալ: Անուանակիր և  
շնորհընկալ գոլով բարբառոյ  
ձայնին. ընդ որդւոյն զԵբե-  
ղեայ բարձրաբարբառ քարոզ  
որոտման. և Ռրդոյն աստծոյ  
ճշմարիտ աստվածաբան:  
Քանզի որք արտաքին հանդի-  
սիցն են վիպասան՝ ՚ի մարմ-

նոյ, և որ նորայն են առնուն  
զնիւթ գովասանութեան, այ-  
սինքն ՚ի դիցազնական ազնէ.  
կամ յերևելի գաւառէ. յիշխա-  
նական պատուոյ. կամ ՚ի փար-  
թամ՝ գոյից. ՚ի բազմահանճար  
իմաստից. կամ ՚ի հնարագիւտ  
արհեստից. ՚ի զարմանահրաշ  
գեղոյ. կամ ՚ի քաջ զօրու-  
թեանց. և որք սաապէս են սո-  
վորեալք բանիւ ճախարա-  
կեայս յօրինել դրուատու: Եւ թէ  
ունեք հաճոյ թուեսցի՝ բազում  
ինչ և մեզ առձեռն պատրաստ  
առ այս նիւթ գտցի գովեստի:  
Գոլով նորա ազատ պայա-  
զատ, յազնէ սիսական բնիկ  
հայկազնի: Գաւառաւ Ռրոտ-  
նէի. իշխան ազգաւ. տիրելով  
բազմաց և փարթամ գոյից.  
բազմահանճար իմաստիւք առ  
լցեալ. ըստ ոգէշունչ մատենի՝  
յարտաքինսն վարժեալ սովես-  
տի. ընդ հնարագիւտ արհեստի՝  
զիրաշս ձեռակերտէ. ընդ զար-  
մանահրաշ գեղոյ շքեղաշուք  
շնորհի՝ և զգիրք մասնկանցն  
բարեչափ պատկանեալ հասա-  
կէ: Գոլով առ այս պընտակազ-



մութեամբ ըստ հաւուցն նոյնասեռի հարազատ ցեղի. զի քերևս ոք սակաւուց մասանց սոցին ճահատրեսցի. իսկ սա բոլորովին եղև ընդունակ շնորհի: Եւ այս զի՞նչ իցէ նմա գովութեանց արժանի. որև առ ոտն կոխեալ արհամարհեաց զունայնութիւն կենցաղոյս աշխարհի. ելեալ ի վերայ աշտարակի գերամբարձութեան, ձայնէր 'ի լուր ամենեցունց միայն ելս դնել 'ի մտի (ուր Ջրիստոս նստի ընդ աջմէ հայրենի): Որև սեռ ազգին ունելով յոգիս անդրանկաց կատարելոցն արանց 'իգաւառ վերնոյն Երուսաղէմի յիշխանութիւն տասն քաղաքաց ընդ փարթամութեան զուգաշահ քանքարաց՝ (զիմաստութիւն որ ծածկեալն էր յագագաց): Յաղթող ախտից ստորադասութեամբ ստորանկելոյն. և գործք ձեռաց՝ արդարութեան և իրաւանց: Որև գեղեցիկ տեսլեամբ առ որդիս մարդկան կերպացեալ ըստ կարի 'ի չափ հասակի ընտրելոցն նախնի. ուրոց բաղդատութեամբ իմն շա-

րայարեսցի: Որպէս Ադամն առաջին 'ի պատկեր տիրական ստեղծեալ. և Եդեմայ դրախտին վայելչացեալ. և սա նոյնատիպ պատկերաւն պայծառացեալ. նորատունկ և իմանալի դրախտիս փառազարդեալ: Հաճոյացեալն Աստծոյ Աբել՝ յընկերադաւ եղբօրէ՝ 'ի դաշտ հեռացեալ և սպանեալ. և սա 'ի տիրանենգ և յեղբայրադաւ ընտանեաց տարաշխարհիկ վտարեալ և մահու առթեալ: Ենովս մարդ անուանեալ. և յուսով զարդարեալ. և սա նորին յուսոյն հաղորդեալ, ըստ նախանկար գեղոյն մարդ գերահռչակեալ: Ենովք պահոցն պահպանութեամբ 'ի գերատեղիս փոխեալ. և սա նովին ժուժկալութեամբ այսօր առ նոյն երկինս վերափոխեալ: Նոյ այր կատարեալ էր. ասէ գիրն. որև 'ի հեղձմանէ համաշխարհական ջուրց ապրեցաւ. և այլոց պատճառ փրկութեան երևցաւ. և սա ամենայն որպիսութեամբ կատարեալ՝ 'ի ջրահեղձիկ մեղաց աշխարհի



ԳՐ. ՏԱԹԵՎԱՅԻ




ազատեալ ապրեցեալ. և բազմաց առիթ ցուցաւ փրկութեան: Երբեայն պահեցաւ լեզու. զի ոչ միաբանեցաւ ընդ չար խորհուրդ վաղափուլն ամբարտակի շինուածոյ. իրաւապէս և սորայն իմաստ բանի յաւիտենից յիշատակ պահպանի. զի ոչ ժողովիւր 'ի ժողովս արեան. և ոչ բնակէր 'ի սրտի տան նորայ ամենայն ամբարտաւան կամ հերձաղաւան: Մերքիսեղեկ քահանայ Աստծո բարձրելոյ. և սա ըստ նորին կարգին քահանայ հետևող մնին յաւիտեան առանց թիւրելոյ: Աբրահամ՝ հաւատով ընտրեալ. և հայր բազմաց ազգաց կոչեցեալ. և սա որդի իւր ժառանգակցեալ. որև հայր բազմաց հրաւիրեալ: Միածինն Իսահակ պատարագաւն վկայեալ և օրինակեալ. և սա ինքնանուէր անձամբ չարչարակից նորին և փառացն հաղորդեալ: Յակոբ տեսողն Աստծոյ և հայր նահապետաց. և սա նմանապէս զԱստուած ունեալ միշտ 'ի սրտի և 'ի լեզուի, ուստի ծնաւ յարգանդէ մտաց հոյս վարժա-

պետաց: Յովսէփ յեղբարց վաճառեալ և 'ի գահոյս տիրութեան ժամանեալ. և սա երբեմն 'ի հայրենեաց տարամերժեալ. և բոլոր սեռից լաւագոյն իմն տէրութեամբ պատուեալ: Հային համբերութեան Յոբ նպատակ փորձութեան եղեալ և կրկին ստացեալ. և սա հանգոյն մնին 'ի բազմակործան փորձանաց զերծեալ. և համբերութեամբ զոգիս վերստին ստացեալ: Մեծն Մովսէս հնոյն օրէնսուսոյց. և տախտակաց բերօղ. և սա պատմօղ օրինաց նորոյս. և կտակարանաց ընթերցօղ: Ահարօն և որք ըստ նորայն սպասաւորք սուրբակերպ օրինակին մատուցման. իսկ սա նորոյս անփոփոխութեան գոլով նուիրօղ ճշմարիտ խորհրդեան: Յեսու անուանակիր վեհին. որև առաջնորդ եղև բանակի. և սա կոչմամբ պետական համեմատ նորին՝ և առաջնորդ քաջ հովին ընտրութեան հօտին: Եւ զի՞ է ինձ առեալ յերգ մասնաւորակի գնա՝ որ բոլորովին էր մարգարէաբուղիս հոգի. առաքելա-

շնորհ քարոզ. աստուածաբան աւետարանիչ. վէմ դաւանութեան. և անօթ ընտրութեան: Չամենայն զիա՞րդ ոք մարթացի բանի մարմնեղէն յօրինել դրուատս ներբողի այնմ, որ յամենեւանեան բանէ պարառութեանցն եղև գովելի: Այն որ աղքատն էր հոգւով. և տրտում սգով: Որ բազմաց էր ուրախութիւն և փարթամութիւն լիով: Որ քաղց և ծարաւն էր արդարութեան. և զովացումն լրութեան առ պէտս կարօտութեան: Որ խաղաղարարն էր և հեզ. ողորմած և մաքուր սրտիւ՝ յորում Աստված տեսանի: Որ հալածեալ վասն արդարութեան. և նախատեալ վասն փրկութեան. որ լոյսն էր խաւարելոց. և ուղղիչ մոլորելոց: Աղ անհամելոց. և համեմիչ նեխելոց: Որ խորագետն էր պարզամտութեամբ. և զգօնացեալն հանդերձ մանկութեամբ: Որ բարձր էր խոնարհութեամբ և մեծ սպասաւորութեամբ: Որ գանձն էր ազարակի. և լուսատու մարգարիտ հայոց աշխարհի: Որսորդն մարդ-

կան. և մշակն սերմանեաց: Որ տանուտէր մտերիմ. և տնտես հաւատարիմ: Դաստիարակ այցելու. և կերակրիչ 'ի ժամու: Որ հայրն էր որբոց. և խնամածու այրեաց: Որ ծածկոյթ էր մերկաց. և ժողովօղ օտարաց: Արձակիչ բանտաց. և բժիշկ հիւանդաց: Որ հանգիստն էր աշխատելոց. և սփոփումն վշտացելոց: Մեծութիւն աղքատաց. և սանձ մեծատանց: Որ իմաստն էր անխրատից. և կատարումն ծերոց: Դատաւոր անիրաւաց. և օրէնք անօրինաց: Որ խռովելոցն էր խաղաղութիւն. և բարբարոսաց մարդասիրութիւն: Արդարոց խորհրդակից և սրբոց սննդակից: Որ տօնախմբօղն էր մարտիրոսաց և յիշատակ վկայից: Դայժառութիւն տօնից և զուարճութիւն ժողովոց: Որ հրեշտակն էր 'ի մարմնի և այր ցանկալի հոգոյ ըստ Դանիէլի: Որ մերձաւորաց սխրալի և հեռաւորաց տարփալի: Որ առատ ձեռօք և զուարթ երեսօք սփռեալ տայր աղքատաց, յօրինելով զբանն դատաստանի. (զի յաւիտեան





մի՛ սասանեսցի): Որոյ բերանն խորհէր զիմաստութիւն և լեզունորա բղխէր զիրաւունս զի յօրէնս տեառն էին կամք նորա և օրէնք նորա ՚ի սրտի նորա և աստուած փառաւորիւր ՚ի խորհուրդս նորա: Որ բանի խրատէր և գործով վկայէր: Որ զյանցաւորս յանդիմանէր և չարացն սաստէր. որ հայելով յանագորոյսն մաշէր և վաստակս արտասուաց հոսէր: Որ (լայր ընդ լացօղս և խնդայր ընդ խնդացօղս): Որ ոչ չար հատոյց չարի. այլ բարի փոխանակ չարի. օրհնութիւն անիծողաց. սէր ատելեաց և աղօթք հալածչաց: Նա ոչ էառ նախատինս ՚ի մերձաւորաց. կամ կաշառս իրաւանց և ոչ առիթ գայթակղութեան փոքրկանց: Սա երկայնամիտ մեղուցելոց և ընդունիչ զղջացելոց: Որ ներէր պարտապանաց և շնորհէր զպարտողաց. զի սա էր կրկին Յօհան Ոսկեբերան. վարդապետ ապաշխարութեան. մանավանդ թէ աստվածաբան և բարբառոյն ձայն: Սա երկրորդ

լուսաւորիչ ՚ի խաւարէ անգիտութեան ազգի հայկազեան. ոչ միայն հնգետասան ամօք նոյն չափ կիսական թոով ՚ի մէջ թուալից մարմնեղէն վիրապի բերելով: Սա երկակի Յօհան Օձնեան՝ մաքրելով զխամբեալսն յաղանդոյն քաղկեդոնեան և զոչ հաւանեալսն հերքեալ և զբազում վանորայս ՚ի ձեռաց նոցին ազատեալ: Սա քանոն ուղղափառութեան և սին հաստատութեան: Սա հիմն հաւատոյ և պայծառ ջահ եկեղեցոյ: Սա ախոյեան անպարտելի և պարիսպ անխոնարհելի: Սա ցրումն հակառակորդաց և վանիչ հերձաւորաց առաջի ազգաց ազանց և թագաւորաց: Սա ուրախութիւն և պարծանք աշխարհի: Սա վերստին Կիւրդոս և երկրորդ Դեոսկորոս: Չի սովաւ նորոգեցաւ դաւանութիւն որ յեփեսոս և հերքեալ կարկեցաւ ժանտաժանին Նեստորիոս: Սովաւ ընտրութիւն բարեաց և մերժումն չարաց. ուղղութիւն թիւրելոց և քաւութիւն մեղուցելոց: Սովաւ յոյս տարակուսելոց



և հաստատություն զայթակղելոց. ուսումն տգիտաց և բարեկանություն գիտնոց: Սովաւ նուէր քահանայից և պաշտպանություն պաշտօնէից. քարոզութիւն բանասիրաց և պայծառութիւն բնաւից ուխտից համօրէն լրմանց: Սովաւ տղայոց պահպանութիւն և մանկանց զգաստութիւն. կուսից ողջախոհութիւն և ամուսնացելոց պարկեշտութիւն: Սովաւ ապաշխարութիւն պարկեշտելոց. պատկառումն յանդգնելոց. ժրութիւն ծուլից. արիութիւն տկարաց: Սովաւ պահպանութիւն օրինաց. քննութիւն իրաւանց. հնազանդութիւն ապստամբից. կայ ամբարտաւանից: Ձի՛ ՚ի սմանէ երկիւղ տէրանց. մտերմութիւն ծառայից. խնամք որդեաց և պատիւ հարց. հանդարտութիւն պատերազմաց. խաղաղութիւն իշխանաց և բարեմտութիւն իշխեցելոց: Այլև՝ ՚ի սմանէ ընթերցումն սուրբ գրոց և վարժումն արտաքին կրթութեանց. տեսական իմաստից և գործնական արդեանց շարայարութեանց:

՚Ի սմանէ յոքնանկար նորագիծ տառք և երաժշտական եղանակք. ցայգացանկ հսկմունք և ուտնկաց վերծանութիւնք: ՚Ի սմանէ պահողաց պնտութիւն. ճգնաւորաց ժուժկալութիւն. վանականաց վարք. աշխարայնոց սահմանք: ՚Ի սմանէ և օրինակ բարեաց. շինուածք եկեղեցեաց. հասարակութիւն կերակրոց և պէտք միեղէն եղբայրութեանց: Եւ զայլս մասնաւորակի՝ համարիմ երկարութիւն դրոշմել ՚ի քարտիզի պատճառ իմաստից տալով խնդրողացն մեղմով, նախանկար գովութեանց յապայս լինելով: Եւ գիտեմ զի ըղձալի է հաց քաղցելոց և ջուր ծարաւեաց. լոյս խաւարելոց և առաջնորդ մոլորելոց: Ուրեմն ապա և հայր որբոց. վարդապետ աշակերտաց. հովիւ ժողովրդոց և պետ առաջնորդելոց: Պիտանի է ուսումն սիրողաց և խնամիչ տածելոց. նաւապետ ընկղմելոց և բժիշկ ախտացելոց: Արդ ո՞վ սիրելի եղբարք՝ աշակերտք վարժա-



ԱՎԵՏՈՒՄ. նկարիչ՝ Գր. Տաթևացի



պետին. որդիք հօրն. աղէտ-  
դորմ սրտիւ ձայնակից լերուք  
վշտացեալս անձին ողբալով.  
նչ զնա, այլ զմեզ կոծելով. ոչ  
զհայրն, այլ զորքացեալսս:  
Խնդրելով զառաջնորդն լուսոյ,  
և ոչ գտանելով: Ձխնամօղ  
բժիշկ և ոչ ուրեք է: Ձիմաստուն  
նաւաստին, և ոչ երևի: Ձհո-  
վուապետն բարի, և ոչ ժողովէ:  
Ո՛վ մեծի տառապանցս. ո՛վ վշ-  
տագին սգոյս. ո՛վ յանկարծա-  
հաս թշուառութեանցս: Մինչև  
ցայժմ իբր յառազաստի պա-  
րէաք՝ գնայաք միաբանու-  
թեամբ՝ ՚ի տանն աստծոյ. այժմ  
ի վերայ արագահաս թշուառու-  
թեանցս հառաչեմք. մինչև  
ցայժմ ուրախութեան երգք.  
այժմ ողբս դամբանական ա-  
ռեալ երգեմք: Ուրախութեան  
պատմութեանն ՚ի սուգ դարձաւ  
և խրախճանութիւն ՚ի տրտ-  
մութիւն: Որ մախանք յան-  
կարծակի կողոպտեցին զհ-  
ոգևոր ուրախութիւնս մեր. որ  
էր հրեղինաց հրաշալի և հո-  
ղեղինաց ըղձալի: Ձիա՞րդ  
այժմ տեսանեմք զհամաս-

փիւռ արեգակն ՚ի մուտս խո-  
նարիեալ և ՚ի տես մարմնա-  
կան աչօք ըմբռնեալ և զլիա-  
կատար ակն լուսոյ յարփոյն  
նուազեալ. կամ ըստ ամպով  
ծածկեալ: Եւ զպայծառ արու-  
սեակն թօթափմամբ նսեմա-  
ցեալ. կամ ընդ երկրաւ թաքու-  
ցեալ: Ձիա՞րդ այժմ տեսա-  
նեմք զօղայարիկն թռչուն՝  
գերամբարձ արծուին ծերա-  
ցեալ և յերկիր անկեալ. մանա-  
ւանդ թէ նորոգեալ և յերկինս  
սլացեալ և անգեղ ակն ՚ի նա ոչ  
հայեալ: Ձիա՞րդ այժմ տեսա-  
նեմք առիւծն արիական ՚ի փա-  
ղանգէ աղուեսուց խաղալի և  
կոխան գտեալ. որև մանա-  
ւանդ ըստ առիւծուն Յուդայէ  
ննջեալ և սրտիւ արթնացեալ  
որսոց պարապեալ: Ձիա՞րդ  
այժմ տեսանեմք զեզն պարա-  
րակ ակօսաբեկ և բազմավաս-  
տակ՝ դադարեալ յաշխատա-  
նաց գործոց բազմապտուղ  
սերմանց. զի զարդինսն ժողո-  
վեսեցէ: Ձիա՞րդ այժմ տեսա-  
նեմք զհատն կենդանական  
հոգւոց կերակուր բանական՝

՚ի փոխակարծ ձմերան յեր-  
կար սերմանեալ. զի բազմաս-  
ցի քաջաբար արդեամբ որոտ  
ընդոստ գարնանաշարժ արթ-  
նութեամբ: Ձիա՞րդ այժմ տե-  
սանեմք զծառն բարձրաբերձ  
բիւրեղէն ոստովք և թաւախիտ  
քաղցրորակ պտղովք յարմտոց  
տապալեալ. զի ՚ի գնացս հոգ-  
ւոյն անթառամ ծաղկօք վերքս-  
տին տնկեսցի բողբոջեալ:  
Ձիա՞րդ այժմ տեսանեմք զտա-  
ճար հոգւոյն սրբութեան ՚ի հի-  
մանց քակտեալ. զի նորոգ տա-  
ճար և առանց ձեռագործին  
կազմեալ շինեսցի: Ձիա՞րդ  
այժմ տեսանեմք զակն աղբեր  
կենեղուտ ջրոյն ցամաքեալ՝  
անդրէն դարձեալ գետոյն և  
ծովուն սառուցեալ ՚ի կորուստ  
նեղչաց ելից աւետեաց և զի  
վտակօրէն հոսմամբ մշտա-  
խաղաց ուղիսիք դարձեալ բղ-  
խեսցի: Ձիա՞րդ այժմ տեսա-  
նեմք զքառակի սեղան ներգո-  
յութեամբ չորս յօրինեալ ընդ  
եօթնաջահեան լուսոյն նուա-  
զեալ. զի քառիցս եռակի, և եօ-  
թեանց կրկնակի փայլակնօ-

րէն ճառագայթեսցի: Որև  
զիա՞րդ այսօր տեսանեմք  
զգունագեղ ականաւոր ակն  
արտագունեալ. ոսկին սոփե-  
րային անպիտանացեալ. մաք-  
րափայլն արծաթ ժանկիւ  
տգեղեալ. մարգարիտն անգին  
բեկմամբ անարգեալ: Ձիա՞րդ  
այսօր տեսանեմք զձեռամբն  
աստծոյ յօրինեալ պատկերն  
՚ի հող լուծեալ և եղեալ փոշի,  
գոլորշի, ծուխ և օդ և հողմ և  
երբ: Այսօր լռեաց ձայնն  
քաղցր և ախորժակ լսելեաց.  
դադարեաց փառաբանիչ լե-  
զուն. թռեաւ շնորհն աստուա-  
ծապարգև. խցաւ սրատես  
ակն. սեղմեցաւ արագալուր  
ունկն: Ո՛վ ցաւագին աղէտիս:  
Ո՛վ ծանրագոյն բեկմանս: Ո՛վ  
անկշռելի տարակուսիս: Ո՛վ  
անլոյծ երկանցս: Ո՛վ ծանրա-  
գոյն տրտմութեանցս: Ո՛վ աղէ-  
խարշ գորովոյս: Ո՛վ պակուցա-  
նօղ տագնապիս: Ո՛վ զարհու-  
րելի երկիւղիս: Ո՛վ անդառնալի  
վճռիս: Ո՛վ անգիւտ կորս-  
տեանս: Ո՛վ անխաղաղ ա-  
լեացս: Ո՛վ անհանգիստ խռո-





ԾՆՈՒՆԴ. նկարիչ՝ Գր. Տաթևացի


վութեանցս: Ո՛վ անբերելի սգոյս: Ո՛վ անդադար լալեացս: Ո՛վ անվճար ողբոյս: Ո՛վ անեզր աղաղակիս: Ո՛վ անճաճանչ խաւարիս: Ո՛վ անառաւօտ գիշերոյս: Ո՛վ անել բանտիս: Ո՛վ մեծի տուգանացս: Վա՛յ և եղուկ՝ ոչ միայն համաքշուառս անձին, այլև համագումար աշակերտեալ խմբից. անպարուր զաւակաց ՚ի ստինս: Մանաւանդ թէ՝ հայրազեղծիկ որդեացս. ո՛չ ստին այլև եղուկ ասեմ բոլոր բովանդակ ազինս արեթեան եկեղեցոյս հայկազեան. զի նուազեցաւ այսպիսի լոյսն մշտաճաճանչ. շիջաւ ճրագն ճշմարտութեան. խզեցաւ սիւնն անխոնարհելի. խախտեցաւ խարիսխն անթիրելի. քակտեցաւ վեմն հաստահեղուս. տապալեցաւ անկիւնն քառակուսի: Շարժեցաւ հիմն արժանակառոյց և եղև կործանումն մեծի տանս արևելեան: Ձի այսօր կողոպտեցաւ հոգևոր գանձն: Այսօր արքունական ճոխութիւն զրկեցաւ: Այսօր պակասեցաւ մեկնութիւն հոգե-

շունչ մատենից կամ մնաց ասելի է. զոր Պօղոս գոչէ. աւետարանն աղաղակէ. լուծումն սրբոց նրբից և արտաբացումն արտաքին սոփեստից: Այսօր յորում տօնեմք ծննդեանն և մկրտութեան ՚ի միում պատկերի, տոյն այսօր պատուեմք զօր ծննդեան սորին և զվերստին կոչումն ելից յաշխարհէ: Որև այսօր փոխեցաւ յիշատակն ՚ի բնութիւնից սոսկալին առ անփոփոխն եղանակ հաւուցն նախկին: Այսօր և կոչումն մակադրութեանցն օրինի՝ յեղագրեցաւ ըստ իրին անգիծ մատենի: Այսօր դատարկացաւ բազմոցին գահ: Այսօր վերացաւ աթոռոյն շնորհ: Այսօր ամայացաւ տեղակալութիւն դասուն: Այսօր ունայնացաւ զենն քրիստոսունակ: Այսօր ահա տքաւ իւրքն ամենալոյսն զոն և ինքն ոչ է ՚ի միջի. ակն ածեմ զաչս՝ և ոչ տեսանեմ. յաժիմ մտօք և ոչ երևի. եթէ կական բարձայց՝ ոչ լսէ և շօշափմամբ ոչ ըմբռնի. եթէ հարցից՝ ոչ պատասխանէ և յարտասուս ոչ խնայէ: Աղաչա-



նաց ոչ ողորմի և պատգամաց ոչ անսա: 'Ի բարեկամսն ոչ ակնարկէ: Եւ 'ի մօտաւորաց հեռացեալ փախչի: Յազգայնոց օտար գտաւ և 'ի սիրելեաց քիկունս դարձոյց: Ջծառայս անաչառ դատէ և 'ի տէրանց ոչ ամաչէ: 'Ի բռնակալաց աներկիւղէ և յիշխանաց անպատկառ: 'Ի պատուոյ ոչ փառաւորի և յանարգանաց ոչ սուգտանի: Յաղերս ոչ խոնարհի և զընծայս արհամարհէ: Կարեաց ոչ կարօտի և զբնաւորականս խոտէ: Տիւ ոչ ծագէ և զհշեր ոչ փոփոխի. զի եղանակք մմա անյեղք են և ժամանակ մշտական յաւիտենից: Եւ զի այս այսպէս է որպէս և է իսկ. յաղագս որոյ՝ մի ինչ է յոյսն իմ. երկիրպագանել՝ ուր կացեալ են ոտք նորա. քերս մխիթարեցայց սգով յանձնալի տապոյս. անկեալ ի վերայ երեսաց՝ զփոշի նշխարաց մասանց նորին լիզելով: Չի ըղձալի է մեզ բնակութիւն տանս այսմիկ՝ զուգակշիռ ներքնոյն Սաղիմայ. զի և Քրիստոս հանգուցեալ է յոս-

կերս նոցա 'ի միաւոր շիրիմ տապանի սոցա. երկու լուսաւորացս ասեմ. մեծին Որոտնեցոյ և խարազանագգեաց կրօնաւորի Մաղաքի՝ աստծոյ ճգնաւորի: Ոչ յերեք տիւ և զհշեր ըստ գրեցելոյ և այլ յերիս ժամանակս փոփոխելոյ. ուր և պաշտպանութիւնք իմանալեաց և յարութիւն համայնից: Վասնորոյ ըղձալի է ինձ գրկափար համբուրել զփոշի այնր զարշապարաց՝ որով ուղիղ ոտնակացութեամբ տգնէր. որով 'ի տունս աղօթից արագ յաճախէր. որով ի վերայ վիմին հաստատէր: Ըղձալի է ինձ համբուրել զփոշի այնր զարշապարաց՝ որովք զգլուխ օձին ջախջախեաց. որովք զերկրաւորս արհամարհեաց. որովք յերկինս վերայ ճեմեաց: Ըղձալի է ինձ համբուրել զփոշի այնր ծնկաց՝ որովք ծընրահանգոյց չարչարանօք մաշէր. որովք 'ի ծունկս անկեալ աղաչէր. որովք զկրթոտ ծունկս հաստատէր: Ըղձալի է ինձ համբուրել ըզփոշի այնր անղամոց՝ որովք գետ-





նախշտի կողմաներ. որովք սակաւութ շատանայր. որովք յօդեալ պատշաճէր խաղալեօք հոգւոյն 'ի Քրիստոս: Ըղծալի է ինձ համբուրել զփոշի այնր լանջաց սրբութեամբ սրտի՝ որով զկռիւ արդարութեան ներգործէր. որով զստինս հոգևոր ջամբէր: Ըղծալի է ինձ համբուրել զփոշի այնր աջոյ՝ որով բժշկութիւնս բաշխէր. որով զքաւութիւն շնորհէր. որով զողորմութիւն սփռէր: Ըղծալի է ինձ եռափափագ սրտիւ համբուրել զփոշի մատանց այնոցիկ՝ որովք զուղղութիւն գրէր. որովք զՔրիստոս շօշափէր. որովք քառադրոշմ նշանիւք զղևսն հալածէր: Ըղծալի է ինձ համբուրել զփոշի այնր բազկաց՝ որովք բարձեալ բերէր զամենեցունց բարձօղն. որովք զգիրս սուրբս ընդգրկէր. որովք վերնատարած մաղթանօք զադօթսն նուիրէր: Ըղծալի է ինձ համբուրել զփոշի այնր ուսոյ՝ որով 'ի հրահանգս կրթութեան հանդարտէր. որով յինքեան բառնայր զլուծ օրինացն. որով

քառակերպ վակասիւք շքեղաւորիւր: Ըղծալի է ինձ մխիթարիլ և երեսօք համբուրել զփոշի այնր աստվածապաշտ բերանոյ՝ որով բացեալ զաստուածայինսն վարդապետէր: Ըղծալի է ինձ գլխակոր զագաթամբ համբուրել զփոշի այնր գլխոյ՝ որով զգլուխն զՔրիստոս յինքեան կրէր. որով զիւղ շնորհացն ընդունէր. որով զագղունն կենդանական՝ բոլոր անդամոցն շնորհէր: Առ 'ի պահպանիլ ամբողջ զանագան յօդուածով 'ի լրումն մարմնոյդ քոյոյ հասակի՝ աղաչեմ: Չայցելոյս 'ի խնամել: Չպէտս յուսուցանել: Խնդրողացն 'ի շնորհել: Չքահանայս 'ի քաւել: Չպաշտօնեայս 'ի սպասաւորել: Չժառանգաւորս 'ի դաստիարակել: Չժողովուրդս ունկնդրութեան սոցին հետևիլ: Այլ և թագաւորաց հանդարտութիւն և իշխանաց անդորրութիւն. ագատայնոց ազնութիւն և զինուորաց զուարթութիւն. քաղաքաց պահպանութիւն և որք 'ի նոցա զանագան հասակաց խնամար-

կութիւն: Որպէսզի յետ աստեացս ելանելոյ՝ երջանիկ գլխոյդ հետևելով տեսանել զքեզ յանգուական 'ի փառս: Ուր անպատում գեղեցկութիւն է՝ և անտրտում ուրախութիւն. ուր յաւեժ ցնծութիւն է՝ և զուարճացելոցն գեղապարտութիւն. ուր ակունք սերովբէիցն է՝ և պարք քերովբէիցն. ուր բիւրք հրեշտակացն են՝ և եկեղեցիք անդ-

րանկաց. ուր աստուածաբանիցն կաճառք և համախմբիցն գումարք: Անդ պսակազարդ և պաճուճագգեստ լուսեղն փառօք փայլեսցիս ընդ հոմացեղիցն քոց հրեշտակերսմ դասուցն 'ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր: Որով և ընդ որում հօր համանգամայն և Հոգւոյն Սրբոյ փառք յաւիտեանս, ամէն:

Սուսաննա Մակարի Գրիգորյան  
Միջնադարյան հայ վարդապետներ

Նկարիչ՝  
Համակարգչային ձևավորում՝  
Սրբագրիչներ՝

Կ. Գրիգորյան  
Ա. Բաբայան  
Գ. Դերձակյան  
Ա. Ստեփանյան

Պատվեր՝ 205: Չափսը՝ 70X108  $\frac{1}{32}$ : 1 տպագրական մամուլ:  
Տպաքանակը՝ 500:

«Տիգրան Մեծ» ՓԲԸ հրատարակչություն